ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԹՎԵՐՈՎ 2
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 5
ԻՆՈՎԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 6
ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ 7
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ 8
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ 9
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 10
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 11
ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 13
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒՅԹՈՒՆ 14
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 15
ԲԻԶՆԵՍ ԱՐՄԵՆԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ 17

ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

◊ 2018թ. թվականի առաջին կիսամյաում արձանագրվել է վերջին 8 տարիների առաջին կիսամյակի **ՀՆԱ աճի ամենաբարձր ցուցանիշը՝ 8.3%**:

◊ 2018 թվականի առաջին կիսամյակում ՀՆԱ ճյուղերի ավելացված արժեքի աճերը կազմել են՝ առևտուր և ծառայություններ՝ 9.5% (նպաստումը՝ 5.3 տոկոսային կետ), շինարարություն՝ 8.9% (նպաստումը՝ 0.5 տոկոսային կետ), արդյունաբերություն՝ 6.8% (նպաստումը՝ 1.4 տոկոսային կետ), գյուղատնտեսություն՝ 5.8% (նպաստումը՝ 0.5 տոկոսային կետ): Զուտ հարկերի ավելացված արժեքի աճը կազմել է 8.7% (նպաստումը՝ 1.0 տոկոսային կետ):

◊ 2018թ. հունվար-հուլիսին **տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 9.3%:** Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ծավալը աճել է 4.3%-ով, գյուղատնտեսական արտադրանքի ծավալը՝ 4.6%, շինարարության ծավալը՝ 10.4%, առևտրի շրջանառության ծավալը՝ 8.9% և ծառայությունների ծավալը՝ 18.7%:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

◊ 2018թ. հունվար-հուլիսին **արդյունաբերական արտադրանքի թողարկման** ծավալը կազմել է 954.6 մլրդ դրամ, աճը՝ **4.3%:** Արդյունաբերության աճը զսպել է հանքարդյունաբերության 10.7% նվազումը, իսկ մշակող արդյունաբերության աճը կազմել է **9.3%:**

◊ Հունվար-հուլիսին արդյունաբերական արտադրանքի իրացումը կազմել է 935.8 մլրդ դրամ, ընդ որում **արտահանվել է իրացված արտադրանքի 48.0%-ը** (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 45.0%-ի դիմաց):

◊ Մշակող արդյունաբերությունում հատկանշական են հագուստի արտադրության (50.6%), այլ ոչ մետաղական արտադրատեսակների (44.5%), ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրության (20.6%) աճերը:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

◊ 2018թ. հունվար-հուլիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 4089.7 մլն ԱՄՆ դոլար՝ շարունակելով գրանցել երկնիշ աճ՝ **26.8%:** Արտաքին առևտրի հաշվեկշիռը կազմել է -1363.6 մլն ԱՄՆ դոլար:

◊ Արտահանումը կազմել է 1363.0 մլն ԱՄՆ դոլար՝ աճը **17.3%,** իսկ ներմուծումը՝ 2726.7 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ **32.1%**:

◊ Արտահանման գծով հիմնական գործընկերներն են Ռուսաստանը (տեսակարար կշիռն արտահանման մեջ՝ 25.0%), Շվեյցարիան (13.9%), Բուլղարիան (10.5%), Գերմանիան (6.8%) և Իրաքը (5.3%):

◊ Ներմուծման գծով հիմնական գործընկերներն են (ըստ առևտուր անող երկրի) Ռուսաստանը (28.6%), Չինաստանը (7.3%), Վրաստանը (7.2%), Գերմանիան (5.3%) և Իրանը (4.7%):

◊ Արտահանման ապրանքային կառուցվածքում շարունակում են գերակշռել հանքահումքային արտադրանք (29.6%), պատրաստի սննդի արտադրանք (20.9%), ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր (13.6%), թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր (12.9%) ապրանքախմբերը: Հատկանշական է մանածագործական արտադրանքի արտահանման 70.6%-ով աճը, որի արդյունքում դրա տեսակարար կշիռը կազմել է 8.8%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 6.0%-ի դիմաց:

- ◊ Ըստ տեխնոլոգիականության մակարդակի արտահանման կառուցվածքում գերակշռում են ռեսուրսների վրա հիմնված ապրանքների տեսակարար կշիռը (52.3%): Նվազագույն մշակում անցած ապրանքների տեսակարար կշիռը կազմել է 13.0%, ցածր տեխնոլոգիատար ապրանքներինը՝ 12.9%, միջին տեխնոլոգիատարը՝ 8.9%, բարձր տեխնոլոգիատարը՝ 2.1%, այլ ապրանքներինը՝ 10.8%:
- ◊ Ներմուծման կառուցվածքում, ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման, 48.4%-ը բաժին է ընկնում միջանկյալ սպառման, 33.7%-ը սպառողական, իսկ 17.9%-ը կապիտալ ապրանքներին:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

- ◊ 2018թ. հունվար-հունիսին ՀՀ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ընդհանուր ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել **է -53.1 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ ՕՈՒՆ ծավալը՝ 81.3 միլիոն ԱՄՆ դոլար,** ընդ որում՝ ընդհանուր ներդրումները նախորդ ժամանակահատ-վածի նկատմամբ աճել **են 1.3 մլն ԱՄՆ դոլարով**, իսկ ՕՈՒՆ-ները՝ **48.4 մլն ԱՄՆ դոլարով**:
- ◊ Ըստ օտարերկրյա ընդհանուր ներդրումների զուտ հոսքերի՝ ներդրումները հիմնականում կատարվել են Ջերսիից (42.8 մլն ԱՄՆ դոլար), Կանադայից (9.5 մլն ԱՄՆ դոլար), Միացյալ Թագավորությունից (4.1 մլն ԱՄՆ դոլար), Միացյալ Նահանգներից (2.5 մլն ԱՄՆ դոլար) և Արաբական Միացյալ Էմիրություններից (2.0 մլն ԱՄՆ դոլար):
- ◊ Օտարերկրյա ընդհանուր ներդրումների զուտ հոսքերը հիմնականում ուղղվել են. մշակող արդյունաբերություն (6.8 մլն ԱՄՆ դոլար), առևտուր (4.3 մլն ԱՄՆ դոլար), շինարարություն (1.4 մլն ԱՄՆ դոլար) և վարչարարական ու օժանդակ գործունեություն (0.96 մլն ԱՄՆ դոլար):

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

- ◊ 2018 թվականի 1-ին կիսամյակում հանրապետություն են ժամանել 685.97 հազար զբոսաշրջիկ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է **10.2%:** Զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 610.9 մարդ, աճը՝ 7.1%: Ժամանած և մեկնած զբոսաշրջիկների տարբերությունը կազմել է **75 հազար մարդ**՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 52 հազարի դիմաց:
- ◊ Ըստ ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության՝ զբոսաշրջիկների 27.1%-ը բաժին է ընկնում ԱՊՀ երկրներին (աճը՝ 17.4%), 24.0%-ը՝ ԵՄ երկրներին (աճը՝ 43.3%) և 48.9%-ն այլ երկրների խմբին (աճը՝ 8.1%):
- ◊ Ըստ այցելության նպատակի՝ ժամանողների 52.5%-ը հանրապետություն են ժամանել հանգստի և ժամանցի (աճը՝ 8.5%), 22.9%-ը՝ գործնական (աճը՝ 22.8%), 1.5%-ը՝ բուժման (աճը՝ 9.7 անգամ) և 23.1%-ը՝ այլ նպատակներով (աճը 29.2%):
- ◊ **Ներքին զբոսաշրջության աճը կազմել է 17.1%-ով** (158.7 հազար զբոսաշրջիկ): Ներքին զբոսաշրջության կառուցվածքում 69.9%-ը բաժին է ընկել հանգստի և ժամանցի (աճը՝ 23.8%), 22.9%-ը՝ գործնական (աճը՝ 1.8%), 3.4%-ը՝ բուժման (աճը՝ 19.5%) և 3.8%-ը՝ այլ նպատակով (աճը՝ 6.1%) այցելություններին:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում, ինչպես հայտնի է, կառավարությունը ձեռնամուխ է եղել նոր իրողությունների համատեքստում ՀՀ տնտեսական զարգացման նոր տեսլականի ձևավորման, տնտեսական աճի նոր մոդելի բացահայտման և տնտեսական **քաղաքականության նոր օրակարգի ձևակերպման աշխատանքներին:** ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված

առանցքային ուղենիշների շրջանակներում կառավարության տնտեսական բլոկի պատասխանատուները, որոնց թվում նաև՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ակտիվ ընդգրկված են հետազոտական և մասնագիտական համակողմանի քննարկումներում, որոնց արդյունքները կմարմնավորվեն տնտեսության զարգացման երկարաժամկետ ռազմավարությամբ:

Նշված քննարկումները Նախարարությունը շարունակում է նաև **արտաքին գործընկերների հետ:** Բարեփոխումների և զարգացման օրակարգի, համագործակցության արդյունքների և հետագա ուղղությունների ճշգրտման նպատակով քննարկումներ են տեղի ունեցել Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի հետ:

Անցած 100 օրյա ժամանակահատվածն ակնհայտորեն աչքի է ընկնում **Հայաստանում ներդրումներ կատարելու և գործարարությամբ զբաղվելու հնարավորությամբ հետաքրքրված գործարար համայնքի աննախադեպ ակտիվությամբ:** Ընդ որում, ներդրումային առաջարկներ են ստացվում ինչպես օտարերկրյա և սփյուռքը ներկայացնող հայ գործարարներից, այնպես էլ տեղական գործարար շրջանակներից (շուրջ 60): Մասնավորապես, հանդիպումներ են տեղի ունեցել Արաբական Միացյալ Էմիրություններից, Չինաստանից, Մեծ Բրիտանիայից, ԵՄ և ԱՊՀ երկրներից ժամանած գործարարների պատվիրակությունների, լիբանանյան, իտալական, քուվեյթյան, ավստրիական և այլ երկրների ընկերությունների ներկայացուցիչների, ինչպես նաև մի շարք հայաստանյան գործարարների հետ: Պոտենցիալ ներդրողները հետաքրքրություն են հայտնել անշարժ գույքի, բնակարանաշինության, հյուրանոցային բիզնեսի, զբոսաշրջության, մշակող արդյունաբերության, էներգետիկայի, առողջապահության, մշակույթի և այլ ոլորտներում ներդրումներ կատարելու վերաբերյալ: Իհարկե ներդրումային առաջարկների նյութականացումը կոնկրետ ծրագրերի տեսքով պահանջում է որոշակի ժամանակ, սակայն ներդրումային պատրաստակամության ակտիվությունը ՀՀ կառավարության նկատմամբ ընդհանուր վստահության մթնոլորտում լուրջ հիմքեր է ստեղծում դրական ակնկալիքների համար:

Միաժամանակ, հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության գործունեությունը ներկայանում է նաև մի շարք համակարգային **բարեփոխումների** տեսքով: Այսպես, Նախարարության նախաձեռնությամբ մեկնարկել են կամ ներկայիս տնտեսական օրակարգին համահունչ նոր շունչ են ստացել մի շարք նախաձեռնություններ, մասնավորապես.

- **ՀՀ հարկային օրենսգրքի բարեփոխումներ,** որոնց շրջանակներում իրականացվող լայնամասշտաբ հանդիպումների ընթացքում վեր են հանվել օրենսգրքում առկա մի շարք խնդրահարույց, երկիմաստություն պարունակող, հատկապես ՓՄՁ ոլորտին վերաբերվող դրույթներ: Բիզնեսի հետ քննարկումների արդյունքների ամփոփումը կներկայացվի Հարկային օրենսգրքի փոփոխություններ նախապատրաստող աշխատանքային խմբին:
- **«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների փաթեթի ձևավորում և իրականացում,** որն ուղղված է բոլոր տնտեսվարողների համար բարենպաստ և հավասար տնտեսական մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով մանրածախ շուկայում մեծածախ վաճառողների գործունեություն իրականացնելու կանոնակարգմանը:
- **Կորպորատիվ կառավարման համակարգի գործելակերպի ընդլայնում և արմատավորում,** որի շրջանակներում նախատեսվում է ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնակարգի վերանայում, դրա կիրառման դաշտի ընդլայնում, գերիշխող դիրք ունեցող ընկերություններում և բնական մենաշնորհներում դրանց ներդրում, մասնավոր հատվածում հակակոռուպցիոն համապատասխանության հայեցակարգի ներդրման խրախուսում, կորպորատիվ հաշվետվականության միջազգայնորեն ընդունված ստանդարտների կիրառման և աշխատակիցների բաժնետիրացման խրախուսում:
- **Ազգային բիզնես ինկուբատորի ստեղծում.** Գործարար նոր նախաձեռնություններին՝ գաղափարից մինչև շուկա ամբողջական շղթայով խրախուսման և աջակցության

ինկուբատորի ձևավորման միջոցով հեռանկարային ոլորտներում կստեղծվեն աճի նոր հնարավորություններ և կարողություններ:

- **Պետություն-մասնավոր գործընկերության համակարգի ներդրում,** որի միջոցով ակնկալվում է երկրում պետություն-մասնավոր գործընկերության օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում, ներդրումային կենսունակ միջավայրի կայացում և ՊՄԳ ձևաչափով նախագծերի ակտիվացում:
- **Ներդրումային հիմնադրամի ստեղծում.** Հաշվի առնելով հիմնադրամների կարևորությունը՝ աշխատանքներն իրականացվում են բովանդակային ավելի լայն ընդգրկմամբ՝ նպատակ ունենալով միավորել ինչպես տեղական և միջազգային բնապահպանական կազմակերպութ-յունների ռեսուրսները, այնպես էլ՝ սփյուռքի ներդրումային ներուժը:
- **Ինովացիոն էկոհամակարգի ձևավորում.** ՀՀ-ում ինովացիոն ոլորտի հետագա զարգացումը խթանելու նպատակով մեկնարկել է պետական քաղաքականության հիմնական ուղղություններն ու գործողություններն ամրագրող իրավական հիմքի ձևավորման և համապատասխան ինստիտուցիոնալ դաշտի կազմավորման գործընթացը:
- **Կանաչ տնտեսության սկզբունքների ձևավորում.** Հայաստանում կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման հայեցակարգի նախագծի շրջանակներում նպաստավոր միջավայրի ձևավորման, օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի ադապտացման նպատակով իրականացվել են անհրաժեշտ վերլուծություններ, ուսումնասիրվել է միջազգային առաջադեմ փորձը: Վերջիններիս հիման վրա նախատեսվում է իրականացնել կանաչ տնտեսության վիճակի փուլային գնահատում՝ կանաչ տնտեսության ռազմավարական ուղղությունների և հստակ քաղաքականության մշակման նպատակով:
- **Պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրության բարեփոխում և կիրարկման ապահովում,** որի նպատակն է պետական գույքի կառավարման մոդելի արմատական վերանայում, այդ թվում՝ պետական գույքի ամբողջական և էլեկտրոնային հաշվառման համակարգի ներդրում և բարեփոխում, պետական գույքի ծրագրային կառավարման բարեփոխում, պետական գույքի մասնավորեցման և օտարման բնագավառներում գնահատման նոր մեթոդների նեդրում, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման համակարգի բարեփոխում և այլն:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

◊ ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի N1225-Ն որոշման համաձայն ներդրումային ծրագրի շրջանակներում ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի երկարաձգման գործընթացի շրջանակներում **հավանության է արժանացել 5 ծրագիր, որոնց շրջանակներում նախատեսվում է ընդհանուր առմամբ 7.24 մլրդ ՀՀ դրամի ներդրում և 206 աշխատատեղի ստեղծում**:

◊ Նախարարության և ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի համաձայն՝ կողմերը պայմանավորվել են ՀՀ և ՌԴ արդյունաբերական ձեռնարկությունների միջև համագործակցության ընդլայնման և խորացման նպատակով ստեղծել **համատեղ աշխատանքային խումբ՝ Ճանապարհային քարտեզ մշակելու նպատակով**:

◊ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ համատեղ իրականացվում են հագուստի և կոշիկի արտադրության զարգացման և արտահանման խթանման միջոցառումներ: **Հնարավոր ներդրողներին ներկայացվել են ընդհանուր**

առմամբ մոտ 1810 աշխատատեղ նախատեսող և մոտ 46 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ներդրումային 7 փաթեթներ:

Մշակվել և շրջանառության մեջ են դրվել հետևյալ օրենսդրական նախագծերը.

- ◊ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որով հնարավորություն է ստեղծվում սահմանափակումներ կիրառել չմշակված կաշվի արտահանման վրա և խթանել արդյունաբերական ծավալներով կաշվի մշակման գործունեության իրականացման համար:
- ◊ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի փաթեթը, որը նախատեսում է ներմուծման ժամանակ ավելացված արժեքի հարկի գումարների վճարներից ազատված ապրանքների ցանկում ավելացնել արդյունաբերության մեջ օգտագործվող հումքը և նյութերը:
- ◊ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը վերաբերում է «Հարկային օրենսգրքի» 101-րդ հոդվածում՝ արդյունաբերական կազմակերպությունների կողմից ձեռք բերված՝ ԱՏԳԱԱ 271019710-271019980 ապրանքախմբի ծածկագրերին դասվող քսայուղիրի և այլ յուղերի ապրանքների (բացառությամբ ԱՏԳԱԱ 271019820 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) մասով վճարված ակցիզային հարկի գումարները ՀՀ կառավարության սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպություններին փոխհատուցմանը:

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ◊ ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում ՓՄՁ զարգացմանը» (SMEDA) ծրագրի շրջանակում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ինժեներական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունների ու դրանց տեխնոլոգիական կարողությունների գույքագրման ուղղությամբ, արդեն իսկ գործում է http://www.engineering-armenia.am/ կայքը, որտեղ հասանելի է **200 ինժեներական և բարձր տեխնոլոգիական ոլորտի կազմակերպությունների գույքագրման արդյունքները** ներառող տվյալների բազան:
- ◊ Մշակվել է և շրջանառության մեջ է դրվել **ազգային բիզնես ինկուբատորի ստեղծման հայեցակարգը:** Նախատեսվում է ստեղծել միասնական կառույց՝ տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանն ուղղված նորարար գաղափարներ ունեցող սկսնակ թիմերին և ընկերություններին մեկ պատուհանի սկզբունքով աջակցության տրամադրման համար:
- ◊ Մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Գույքը վարձակալության հանձնելու թույլտվություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին թույլատրվում է վերջինիս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված, սակայն չօգտագործվող պետական սեփականություն հանդիսացող տարածքները գիտատեխնիկական նպատակներով մինչև 10 տարի ժամկետով հանձնել վարձակալությամբ, ընդ որում՝ որպես վարձակալական պայմանագրի հավելված հաստատվում է նաև վարձակալի ներդրումային ծրագիրը:
- ◊ Գերմանական միջազգային համագործակցության ընկերակցության (GiZ) աջակցությամբ մշակվել է ՀՀ նորարարական էկոհամակարգի քարտեզագրման հաշվետվության նախագիծը և **Ինովացիոն զարգացման նոր ռազմավարության** վերաբերյալ փաստաթղթի նախնական տարբերակը:

- ◊ Ամսական պարբերականությամբ իրականացվել է **«Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2018թ. միջոցառումների ծրագրի»** շրջանակներում իրականացված աշխատանքների դիտանցում: Ընթացքի մեջ են Բարեփոխումների զեկույցի (DB Reform Memorandum) նախնական տարբերակի վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքները:
- ◊ Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչների կողմից վաճառողներին վաճառատեղերի տրամադրման գործընթացի ուսումնասիրության արդյունքներով հուլիսի 1-ից «Փեթակ» ՍՊԸ, «Երևանի պահածոների գործարան» ՓԲԸ (Սուրմալու), «ԳԼԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (Rich Plaza), «Ռաֆայել-Տաթև» ՍՊԸ (Մալաթիա), «Վաղարշ և որդիներ Կոնցեռն» ՍՊԸ առևտրի իրականացման վայրերում գործող **վաճառատեղերի վճարների գումարները իջեցվել են 20%-ով**:

Մշակվել և շրջանառության մեջ են դրվել հետևյալ օրենսդրական նախագծերը.

- ◊ **«Առևտրի և ծառայությունների մասին»** ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ուղղված են **շրջիկ առևտրի կանոնակարգմանը**:
- ◊ **«Առևտրի և ծառայությունների մասին»** ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ուղղված են բոլոր տնտեսվարողների համար բարենպաստ և հավասար մրցակցային պայմաններ ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ **մեծածախ վաճառողների սահմանափակմանը մանրածախ շուկայում գործունեություն իրականացնելու մասով**:
- ◊ **«Առևտրի և ծառայությունների մասին»** ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ուղղված են առևտրի իրականացման վայրի **կազմակերպչի և վաճառողի միջև հարաբերությունների հստակեցմանն** ու տվյալ ոլորտում վաճառողների միջև հավասար մրցակցային պայմանների ապահովմանը:
- ◊ **«Բաժնետիրական ընկերությունների մասին»** ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որն ուղղված է **փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության ապահովմանը**,
- ◊ **«Գովազդի մասին»** ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ուղղված է **արտաքին գովազդի ոլորտը կանոնակարգող օրենսդրության հստակեցմանն ու կատարելագործմանը**,
- ◊ **«Լիցենզավորման մասին»** ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով տնտեսվարողներին հնարավորություն է ընձեռվել պետական տուրքը վճարել որոշման ընդունումից հետո՝ **5 աշխատանքային օրվա** ընթացքում՝ ներկայումս

սահմանված **1 աշխատանքային օրվա** փոխարեն: Նախագիծը հավանությանն է արժանացել ՀՀ կառավարության կողմից:

◊ Մշակվել է **«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին»** ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակը տնտեսական մրցակցության բնագավառում **իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվության միջոցների հստակեցումն է, միատեսակ կիրառման ապահովումը և պատասխանատվություն կիրառող մարմնի հայեցողական լիազորությունների սահմանափակումը:**

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

◊ Նախաձեռնվել է **Ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագրի** օրինակելի ձևի վերանայման գործընթաց:

◊ Շարունակվում են քննարկումները **«Օտարերկրյա ներդրումների մասին» և «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքների նախագծերի** վերաբերյալ:

◊ Շրջանառության մեջ է ««ՀՀ և Ճապոնիայի միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

◊ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) հետ համագործակցության շրջանակներում նախապատրաստվել է **Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների եռամյա ծրագիրը**:

◊ **5 ոլորտի/ենթաոլորտի** ներդրումային ներուժի, ինչպես նաև արտահանման շղթայի ուսումնասիրության հիման վրա նախապատրաստվում են համապատասխան **փոփոխություններ գործող կարգավորումներում**:

◊ Ներդրումների ներգրավման խրախուսման նպատակով ստեղծված է **ներդրողներին հասանելի արտոնությունների երկլեզու բազա**, նախապատրաստվում է ներդրումային **ծրագրերի համար հասանելի հողատարածքների բազա**:

◊ Ընթանում են աշխատանքներ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (**OECD**)՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորումների սահմանափակման **ինդեքսի վարկանիշում Հայաստանի ներառման ուղղությամբ**:

◊ Իրականացվում է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ **ՀՀ-ում ազատ տնտեսական գոտիների արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագիրը**: HannoverMesse 2018 միջազգային ցուցահանդեսին մասնակցությամբ ավարտվել է ծրագրի առաջին փուլը:

◊ Բանակցություններ են ընթանում **6** երկրի հետ և **1** երկրի հետ վավերացման փուլում են **ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրերը**:

◊ Համակարգվում է **ԵԱՏՄ ծառայությունների միասնական շուկայի ներքո 43 ոլորտի շրջանակներում 16 համաձայնագրերի** նախապատրաստման աշխատանքները:

◊ Շուրջ 15 ընկերություններին ներկայացվել են գործող արտոնությունները, որոնց արդյունքում **6 ընկերություն ստացել են մաքսատուրքից ազատման արտոնություն** (ընդհանուր **ներդրումները՝ 42 մլն ԱՄՆ դոլար**, ներկրվող սարքավորումների արժեքը՝ 12 մլրդ ՀՀ դրամ, նախատեսված **աշխատատեղեր՝ 609**):

◊ **«Ալյանս» ԱՏԳ-ում** տրվել է 2 նոր շահագործողի թույլտվություն (նախատեսված ընդհանուր ներդրումներ՝ 1.7 մլն ԱՄՆ դոլար, 72 աշխատատեղ)

◊ **«Մեղրի» ԱՏԳ-ում** տրվել է 1 շահագործողի թույլտվություն (նախատեսված ընդհանուր ներդրումները՝ 195 մլն ԱՄՆ դոլար, 102 աշխատատեղ)

◊ ՀՀ կառավարության հավանության է արժանացել **նոր բարձր տեխնոլոգիական ազատ տնտեսական գոտի** ստեղծելու որոշումը:

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրի շրջանակներում իրականացվել են.

1. **Գործարար ուսուցողական աջակցություն՝ 133** ՓՄՁ սուբյեկտ:
2. **Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ 900** ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է շուրջ **1550** աջակցություն:
3. Ֆինանսական և ներդրումային աջակցություն ծրագրի շրջանակներում.
   - «Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից երաշխավորությունների տրամադրում» ծրագրի շրջանակներում **2** ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է **18.8 մլն ՀՀ դրամ** գումարի երաշխավորություն՝ ապահովելով 29.9 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ:
   - **18** ՓՄՁ սուբյեկտներ ֆինանսական աջակցություն են ստացել «Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն» ծրագրի շրջանակներում, որոնց տրամադրված վարկի գումարը կազմում է 75.6 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը կազմում է 77.7 մլն ՀՀ դրամ:
4. Ոլորտային բիզնեսներին աջակցության մասով մարզերից դիմած **17** ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է դրամաշնորհ սարքավորումների տեսքով:
5. ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովման շրջանակներում ՁԵՑ Հայաստան ծրագրի շրջանակներում **156** աջակցություն է տրամադրվել **67 ՓՄՁ սուբյեկտի**:
6. Տեղական տնտեսական զարգացում ծրագրի շրջանակներում իրականացվել են.
   - Տավուշի մարզի Աչաջուր համայնքում գինեգործական-ուսումնաարտադրական կենտրոնի վերակառուցում:
   - Արագածոտնի մարզի Ավան գյուղական համայնքի ջրամատակարարման ցանցի վերակառուցում:
   - Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքի ոռոգման ցանցի կառուցում:
   - Գեղարքունիքի մարզի Կալավան համայնքում տուրիստական կենտրոնի կառուցում:

Մշակվել և շրջանառության մեջ են դրվել հետևյալ նախագծերը.

- **«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»** և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով առաջարկվում է ամբողջությամբ **ապաքրեականացնել նվազ հանրային վտանգավորություն ունեցող տնտեսական մի շարք հանցագործություններ**, այդ թվում՝ ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով չդրոշմավորված կամ դրոշմավորման կանոնների խախտմամբ ապրանքների իրացման դեպքերը:
- **«ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի** նախագիծը, որով առաջարկվում է գինու արտադրությամբ զբաղվող տնտեսավարողներին թույլ տալ

գործել նաև որպես շրջանառության հարկ վճարող կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ՝ միաժամանակ համարվելով ակցիզային հարկ վճարող:

- **«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»**, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: **Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխություններն ուղղված են լիզինգային գործունեության զարգացմանը ՀՀ-ում**:
- **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում** փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվող փոփոխությունն ուղղված է նվազ նշանակություն ունեցող վարչական իրավախախտումների հստակեցմանը և դրանց ժամանակ հարկատուների նկատմամբ **առավել մեղմ վարչական տուգանքների** սահմանմանը:

Նախարարության կողմից ՊԵԿ մասնակցությամբ օգոստոսի 1-ից 14ը ընկած ժամանակահատվածում մարզերում և մայրաքաղաքում կազմակերպվել են լայնամասշտաբ հանդիպումների միջոցառումներ (**16 հանդիպում՝ շուրջ 500 մասնակիցների** ներգրավմամբ)՝ ՀՀ հարկային օրենսգրքում առկա ՓՄՁ-ներին վերաբերող խնդրահարույց դրույթների վերհանման և լուծումների մշակման նպատակով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՄ և ԱՀԿ համագործակցության շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

◊ **ԵՄ 2018թ**. տարեկան գործողությունների պլանի շրջանակում համաձայնեցվել են 2 նոր տեխնիկական աջակցության գործողությունների փաստաթղթեր՝ շուրջ **50 մլն եվրո** արժեքով:

◊ ԵՄ կողմից իրականացվող 2018թ. մոնիտորինգի փուլի շրջանակներում պատրաստվել, ամփոփվել և եվրոպական կողմին է տրամադրվել հայկական կողմի GSP+ շրջանակներում կոնվենցիաների իրականացման ՀՀ զեկույցը՝ 27 միջազգային կոնվենցիաների արդյունավետ իրականացումը գնահատելու նպատակով:

◊ GSP+ առևտրային ռեժիմի ներքո **«Գրանցված արտահանողների համակարգ»** (Registered Exporter System - REX)՝ ապրանքների ծագման հավաստագրման էլեկտրոնային համակարգում իրականացվել է **9 արտահանողների գրանցում**, որի շնորհիվ վերջիններս առանց ծագման երկրի հավաստագրի (Ա ձև) կարող են իրականացնել արտահանումներ ԵՄ:

◊ ԵՄ հետ համաձայնեցվել ու հաստատվել են 5 Թվինինգ ծրագրեր՝ 2-ը հանրային կառավարման բարեփոխումների՝ կոռուպցիայի դեմ պայքարի ու էլեկտրոնային կառավարման ոլորտներում, 1-ը՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման (քաղաքացիական պաշտպանության), 1-ը՝ ինովացիաների ու Հորիզոն 2020-ի, 1-ը՝ քաղաքացիական ծառայության ոլորտներում: ԵՄ պատվիրակության հետ մեկտեղ մեկնարկել են բոլոր 5 ծրագրերի նկարագրերի մշակման գործընթացը՝ ներգրավելով նաև միջազգային փորձագետների:

◊ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) քարտուղարության փորձագետների ՀՀ այցի ընթացքում նախնական ամփոփվել է ՀՀ առևտրային քաղաքականության 2-րդ վերաքննության **ԱՀԿ քարտուղարության զեկույցը**: Կազմակերպվել է նաև առևտրային քաղաքականության ՀՀ կառավարության զեկույցի մշակման աշխատանքները:

◊ Քննարկվել և եվրոպական կողմին է տրամադրվել ԱՀԿ-ում ՀՀ ստանձնած մաքսատուրքերի սահմանային դրույքաչափերի պարտավարությունների փոփոխության բանակցությունների շրջանակներում **ոչ գյուղատնտեսական արտադրանքների ուղղությամբ ՀՀ փոխհատուցումային առաջարկը**, ապահովվել է գյուղատնտեսական արտադրանքների ուղղությամբ ԵՄ կողմին փոխհատուցումային առաջարկ տրամադրելու ուղղությամբ ՀՀ նախարարությունների և ԵԱՏՄ անդամ երկրների հետ քննարկումները:

ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

◊ 2018 թվականի մայիսի 17-ին ք.Աստանայում **ստորագրվել են** «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և **Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առեւտրի գոտու ձևավորմանն ուղղված**» Ժամանակավոր Համաձայնագիրը և «ԵԱՏՄ անդամ պետությունների և **ՉԺՀ միջև առևտրատնտեսական համագործակցության մասին**» համաձայնագիրը:

◊ **Ծխախոտային արտադրանքի տեխնիկական կանոնակարգի** մեջ փոփոխություն կատարելու մասով ընդունվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018թ. հուլիսի 17-ի N115 որոշումը, որի արդյունքում հայկական ծխախոտ արտադրող և ծխախոտ ներմուծող կազմակերպությունների համար **երկարաձգվել է չմակնշված ծխախոտը իրացնելու անցումային շրջանը՝ մինչև 2019թ. հունվարի 15-ը**:

Այլ համագործակցույթուն

◊ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը հանդիպումներ է ունեցել 14 օտարերկրյա պետությունների արտակարգ և լիազոր դեսպանների, ԱՄՆ օտարերկրյա մասնավոր ներդրումների կորպորացիայի տնօրեն Դեյվիդ Բոհիկյանի գլխավորած ԱՄՆ միջգերատեսչական պատվիրակության, Մեծ բրիտանիայից, Գերմանիայից և Չինաստանից ժամանած գործարարների, Հայաստանում Գերմանիայի միջազգային համագործակցության (ԳՄՀ/GIZ) կազմակերպության ՓՄՁ ծրագրերի աջակցության ղեկավարի, Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության փոխդեսպան Քլաուս Վենդելբերգերի և GIZ-Հայաստանի ներկայացուցիչների հետ:

◊ ՀՀ արտաքին գործերի նախարարություն է ներկայացվել հայ-լիբանանյան ներդրումային ֆոնդի հայեցակարգի նախագիծը՝ դիվանագիտական ուղիներով լիբանանյան կողմին փոխանցելու նպատակով:

◊ Աշխատանքներ են իրականացվել շուրջ մեկ տասնյակ միջկառավարական համատեղ հանձնաժողովների գործունեության շրջանակներում:

◊ Նախարարությունը մասնակցություն է ցուցաբերում Ֆրանկոֆոնիայի գագաթաժողովի կազմակերպչական աշխատանքներին: Մասնավորապես Ֆրակոֆոնիայի գագաթնաժողովի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել Գործարար համաժողով:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ 3 քաղաքներում կայացել են հանդիպումներ զբոսաշրջության ոլորտի ավելի քան 70 կազմակերպությունների և ավելի քան 40 մասնագիտացված լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, որոնց արդյունքում ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները.

- ԱՄՆ-ում Հայաստանի զբոսաշրջային գրասենյակի հիմնում,
- Բոստոնից ԱՄՆ տուրօպերատորների խմբի ճանաչողական այց Հայաստան,
- Անդամակցություն ԱՄՆ տուրօպերատորների ասոցիացիային (USTOA),
- Ֆլետչեր դպրոցի շրջանավարտների հավաքներ և շրջագայություններ Հայաստանում,
- ՄԱԿ-ի աշխատակիցների համար կորպորատիվ շրջագայություններ Հայաստանում,
- Հայաստանի զբոսաշրջային արդյունքների ներառում Մետաքսի ճանապարհով անցնող երթուղիների փաթեթներում,
- Հայաստանի զբոսաշրջային արդյունքների ներառում Panorama Travel-ի շրջագայություններում և որպես առաձին ուղղություն՝ Վրաստանի հետ համատեղ տարածաշրջանային փաթեթներում:
- Հայաստանի ընդգրկումը ԱՄՆ զբոսաշրջային օպերատորների փաթեթներում,
- Հայաստանի մասին մարքեթինգային նյութերի տեղադրում ԱՄՆ տեղական ավիաուղու օդանավերում (անհատույց),
- Հայաստանի զբոսաշրջային թվային բովանդակության տարածում ԱՄՆ հայկական կազմակերպությունների թվային հարթակներում,
- ԱՄՆ-ից Հայաստան կրոնական զբոսաշրջության կազմակերպում՝ համագործակցելով տեղի եկեղեցիների հետ (այդ թվում՝ հայտնի սննդի փառատոններին հայկական զբոսաշրջային գրավչությունների մարքեթինգային նյութերի տարածում՝ անհատույց),
- ԱՄՆ մի շարք կաբելային հեռուստատեսություններում Հայաստանի վերաբերյալ տեսանյութերի հեռարձակում (անհատույց):

Չինական շուկայի թիրախավորում միջոցառման շրջանակներում տեղի են ունեցել համատեղ խորհրդակցական-աշխատանքային հանդիպումներ: Մշակվում է համագործակցության հուշագիր ՀԶՀՀ-ի և «Նոր մետաքսի ճանապարհ սինոլոգիական հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի միջև:

Facebook-յան Armenia and Travel, Instagram-ի Armenia and Travel էջերում, ինչպես նաև **www.armenia.travel** կայքում ակտիվորեն հրապարակվել է Հայաստանի զբոսաշրջային վիզուալ բովանդակությունը:

Մշակվել և տարածվել են գովազդային փաթեթներ և բրոշյուրներ (առնվազն 3 լեզվով):

Համագործակցություն է հաստատվել Լիբանանի «Վանա ձայն» ռադիոկայանի, «Ժամ» համահայկական կրթամշակութային պարբերականի, «Օրեր» եվրոպական ամսագրի և Փարիզում հրատարակվող «Նոր յառաջ» թերթի հետ:

Մասնակցություն ցուցահանդեսներին և փառատոներին

- Հայաստանն ու հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել են 2018 թվականի հունիսի 27-ից հուլիսի 4-ը Սմիթսոնիան հաստատության կողմից ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում կազմակերպված **«Ֆոլքլայֆ»** ամենամյա փառատոնին: Փառատոնի շրջանակներում հարցազրույցներ են տրվել The Armenian Mirror Spectator պարբերականին, Voice of America - VOA, Առաջին ալիք լրատվամիջոցներին:
- Չինաստանում 2018թ. հունիսի 15-18-ը Շանհայի համագործակցության կազմակերպության հրավերով ապահովվել է մասնակցությունը Չինաստանի Ցինդաո քաղաքում տեղի ունեցած **Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրների ներմուծվող ապրանքների ցուցահանդեսին**, որի նպատակն էր չինական շուկայում բարձրացնել ՇՀԿ երկրների ճանաչելիությունը և նպաստել երկկողմ և բազմակողմ գործարար կապերի հաստատմանն ու ամրապնդմանը: Ցուցահանդեսին մասնակցել են նաև Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը և «Արենի Փառատոն» հիմնադրամը:

Ցուցահանդեսի օրերին այցելուների համար կազմակերպվել է հայկական գինիների ներկայացում համտես:

Ճանաչողական այցերի կազմակերպում.

- Մայիսի 17-21-ը Արմենիա ավիաընկերության հետ համագործակցությամբ՝ թվով 7 մասնագիտացված ԶԼՄ ներկայացուցիչներ և բլոգերներ ֆրանսիական Լիոն քաղաքից:
- Մայիսի 25-29-ը Էյր Արաբիա ավիաընկերության հետ համագործակցությամբ՝ Հնդկաստանի Մումբայի խոշորագույն RADIO MIRCHI ռադիոյի ներկայացուցիչներ:
- Հունիսի 8-12-ը Էյր Արաբիա ավիաընկերության հետ համագործակցությամբ՝ Հնդկաստանից Բոլիվուդյան հայտնի դերասան Իքբալ Խանը:
- Repat Armenia հիմնադրամի և Քաղաքացիականա ավիացիայի կոմիտեի հետ համագրոծակցությամբ՝ հայտնի Վլոգգեր Նաս Դեյլիի այցը Հայաստան, որի հետևորդների թիվը Ֆեյսբուք սոցիալական ցանցերի կազմում է 7.2 մլն: Հայաստանում գտնվելու օրերին Նասը նկարահանել և ներբեռնել է 6 տեսահոլովակ Հայաստանի մասին:
- Հուլիսին Էյր Արաբիա ավիաընկերության հետ համագործակցությամբ՝ Հնդկաստանից ժամանած հայտնի բոլիվուդյան դերասանուհի Հումա Քուրեշին և առողջ ապրելակերպի և առողջարանային զբոսաշրջության Վլոգգեր ՈՒմա Շոու հաղորդման վարող ՈՒմա Գոշը (5 միլիոնանոց լսարան սոցցանցերում):

Զբոսաշրջային արդյունքի զարգացում

- Այցելուների տեղեկատվական կենտրոնների մեկ ընդհանուր ցանցի ստեղծում՝ ներառելով 12 համայնքներում գործող կենտրոններ,
- Թիրախային շուկաների համար նոր երթուղիների մշակում և շուկա ներմուծում՝ «Մետաքսի ճանապարհը Հայաստանում», «Ռուսական հետքը Հայաստանում», «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր», «Գինու երթուղի», «Արկածային Հայաստան», «Էկո երթուղի», «Հայաստանի համերը», «Քարանձավներից մինչև մեր օրերի քաղաքակրթություն»,
- Ավանդական փառատոներին մեթոդական և ֆինանսական աջակցություն՝ նպաստելով համայքներում համաչափ տարածքային տնտեսական և զբոսաշրջության զարգացմանը,
- Արկածային զբոսաշրջության զարգացում Հայաստանում՝ քարտեզագրելով քայլարշավային, հեծանվային և լեռնադահուկային արահետները, ինչպես նաև ստանդարտիզացնելով նշագրման ձևերը,
- Մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված խորհրդատվական նյութերի պատրաստում և տրամադրում շահագրգիռ կառույցներին:

ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

◊ Մշակվել և ներկայացվել են «**Հավատարմագրման մասին» և «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը,** որոնցով նախատեսվում է կառավարության և համապատասխան մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և գործառույթների ձևակերպումների, մի շարք գործընթացների, գործընթացի արդյունքում տրամադրվող փաստաթղթերի ձևաթղթերի հստակեցում, համակարգող մարմնի լիազորությունների և համակարգող մարմնի կողմից իրականացվող գործընթացների և հաստատվող փաստաթղթերի հստակեցում և սահմանում:

◊ Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել Չափագիտության ազգային մարմին զանգվածի, ծավալի, ջերմաստիճանի և այլ մեծությունների տրամաչափարկման լաբորատորիաների հիմնման ուղղությամբ, մասնավորապես՝ լաբորատորիաների շենքային պայմանների, վերանորոգման, անհրաժեշտ սարքավորումների ընտրության, որակի համակարգի ներդրման և աշխատակիցների վերապատրաստման հարցերով խորհրդատվական ծառայությունների մասով:

◊ Ընթացքի մեջ են էլեկտրոնային հավատարմագրման և համապատասխանության գնահատման գործընթացների ավտոմատացման համակարգի մշակման և ներդրման աշխատանքները, ինչը կապահովի համակարգի առավել անվտանգ և թափանցիկ գործընթացների առկայությունը:

◊ **Ազգային նորմերի պահպանման և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերում ներառման**, ազգային արտադրանքի շուկայահանմանն ուղղված տեխնիկական խոչընդոտների վերացման նպատակով կազմակեպված տեսակոնֆերանսի ձևաչափով թվով 20 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը և դրանցում իրականացվող փոփոխությունները քննարկվել են կանոնակարգող մարմինների և գործարար միջավայրի ներկայացուցիչների ներգրավմամբ:

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒՅԹՈՒՆ

◊ Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել է **376 դիմում** և կատարվել են համապատասխան գրանցումներ, որոնցից.

- **34-ը**՝ ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման,
- **3-ը**՝ ապրանքային նշանների լիցենզիաների գրանցում,
- **1-ը**՝ ապրանքային նշանի ենթալիցենզիայի գրանցում,
- **185-ը**՝ ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում,
- **71-ը**՝ գյուտերի, օգտակար մոդելների արտոնագրերով վերապահված և արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում,
- **82-ը**՝ ապրանքային նշանների պետական գրանցամատյանում փոփոխության գրանցում:

◊ Իրավատերերին է հանձնվել **426 ապրանքային նշանների վկայագրեր**, **26 գյուտի արտոնագրեր, 13 օգտակար մոդելների արտոնագրեր և 10 արդյունաբերական նմուշների վկայագրեր**:

◊ Ազգային ընթացակարգով ներկայացվել է **ապրանքային նշանների գրանցման 550 հայտ** (որոնցից 400-ը՝ ազգային հայտատուներից):

◊ Գրանցվել են **426 ապրանքային նշաններ** (որոնցից 310-ը՝ ազգային հայտատուների անունով): Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 802 ծանուցում: Միջազգային ծանուցումներով կայացվել են 631 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ:

◊ Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային **գրանցման 10 հայտ**:

◊ Ազգային ընթացակարգով ներկայացվել է արդյունաբերական **նմուշի 15 հայտ** (որոնցից 11-ը՝ ազգային հայտատուներից): Արդյունաբերական նմուշների Հաագայի համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 27 ծանուցում:

- Ստացվել է **21 գյուտի և 7 օգտակար մոդելի հայտ**:
- **Տրվել է 40 արտոնագիր**, **որոնցից 27-ը՝ գյուտի, իսկ 13-ը՝ օգտակար** մոդելի:
- Կառավարության քննարկման է ներկայացվել **«Ապրանքային նշանների մասին»** ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, իսկ **«Գյուտերի մասին», «Դիզայնի մասին», «Հեղինակային և հարակից իրավունքների մասին»** ՀՀ օրենքների նախագծերը գտնվում է մշակման փուլում:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից ջարդոնի և թափոնների, թանկարժեք մետաղներից հանքանյութերի և խտանյութերի ու թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների՝ ՀՀ տարածքից երրորդ երկրներ արտահանման լիցենզավորման գործընթացի շրջանակներում տրվել է **8 մեկանգամյա և 4 գլխավոր լիցենզիա**:
- Շրջանառության հսկողության ոլորտում երկակի նշանակության ապրանքների արտահանման, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվությունների տրամադրման և ՀՀ տարածքով երկակի նշանակության ապրանքների տարանցիկ փոխադրման գործընթացի շրջանակներում տրվել է **2 անհատական թույլտվություն**:
- Ալմաստների ներմուծման և արտահանման ժամանակ Քիմբերլի գործընթացի հավաստագրերի հաշվառման, տրամադրման և Քիմբերլի գործընթացի գրասենյակ հաշվետվությունների ներկայացման աշխատանքների իրականացման շրջանակներում **հաշվառվել է 28 հավաստագիր՝** 79,051.20 կարատ ծավալով և 11,103,658.83 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, տրամադրվել է արտահանման **6 հավաստագիր՝** 23,026.78 կարատ ծավալով և 1,525,648.91 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով:
- Վերջնական օգտագործողի հավաստագրի պետական հաստատման և ներմուծման հավաստագրի տրամադրման գործընթացի ապահովման շրջանակներում տրամադրվել է **ներմուծման 1 հավաստագիր** և հաստատվել է **վերջնական օգտագործողի 1 հավաստագիր**:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- **Պետական գույքի կառավարման բարեփոխում.** Մշարվել և Կառավարություն են ներկայացվել **ՀՀ կառավարության որոշումների հետևյալ նախագծերը**.
  - «ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 13-ի N882-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով **օտարման ընթացակարգի պարզեցման նպատակով** սահմանվել են պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման սկզբունքները,
  - «ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի N304-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով սահմանվում են **նվազագույն պայմաններ ներդրումային ծրագրերի շրջանակներում չօգտագործվող պետական գույքի անհատույց տրամադրման համար**,
  - «ՀՀ կառավարության 2006թ. ապրիլի 27-ի N820-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի

ընդունման արդյունքում **կպարզեցվեն պետական գույքը մրցույթով մասնավորեցնելու (օտարելու) գործընթացի վարչական ընթացակարգերը**:

Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 7-ի N515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով սահմանվել են **ուղղակի ձևով հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքերը և պահանջները,** ինչպես նաև առաջարկվող լուծումների արդյունքում հնարավորություն կստեղծվի որոշակի լուծումներ տալ գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիրներին:

◊ **Պետական գույքի (հանրակացարանային տարածքների) նվիրատվություն և սեփականաշնորհում.**

- ՀՀ կառավարության կողմից 2018թ. հուլիսի 15-ին ընդունվել է «1988-1992 թվականներին Ադրբեջանի հանրապետությունից բռնագաղթած և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները սեփականաշնորհելու մասին» N681-Ա որոշումը, որով **սեփականաշնորհման են առաջադրվել 34 բնակելի տարածքներ**:
- ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2011թ. մարտի 24-ի N305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով **նվիրատվության է առաջադրվում 214 բնակելի տարածք**:

◊ **Պետական անշարժ գույքի օտարում և օգտագործում.**

- Մշակվել և շրջանառության մեջ է դրվել պետական գույքի տնօրինման վերաբերյալ կառավարության **12 որոշման նախագիծ**, որից 3-ը՝ ընդունվել է, 4-ը՝ գտնվում է շրջանառության մեջ, 5-ը՝ ներկայացվել է կառավարության քննարկմանը:
- Կնքվել է պետական գույքի անհատույց օգտագործման **38 պայմանագիր և 5 համաձայնագիր, պետական գույքի վարձակալության 8 պայմանագիր և 7 համաձայնագիր**:

◊ **Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մոնիտորինգ.** ՀՀ կառավարության 05.10.2017թ-ի N1262-Ն որոշման համաձայն իրականացվել է 2017թ. տարեկան արդյունքների հիման վրա պետական կառավարման մարմինների ենթակայության **142 առևտրային կազմակերպության ֆինանսատնտեսական վերլուծություն:** Վերլուծությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարություն: Մոնիտորինգի արդյունքներով ֆինանսատնտեսական վիճակի վատթարացում արձանագրած կազմակերպությունների համար՝ դրանց կառավարման մարմինների ղեկավարների կողմից վատթարացման վերաբերյալ պարզաբանումների **և ֆինանսական գործունեության բարելավմանն ուղված առաջարկները** ներկայացվել են ՀՀ կառավարություն:

◊ **Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնավորեցում.** ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Պետական բաժնեմասը մասնավորեցնելու մասին» **ՀՀ կառավարության որոշման 2 նախագիծ**, որոնցից մեկով նախատեսվում է «Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ-ի 7.227% պետական բաժնեմասը մասնավորեցնել ուղղակի վաճառքի ձևով, իսկ մյուսով՝ «Ընդերքաբանի Արեգի տեղամասի» ՓԲԸ-ի 100% պետական բաժնեմասը մասնավորեցնել աճուրդով:

◊ **Պայմանագրային պարտավորությունների հսկողություն.** Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված է եղել՝ 10 պայմանագրով 135.785 մլն ՀՀ դրամի, 1 պայմանագրով 1000 ԱՄՆ դոլարի ներդրման պարտավորություններ, ինչպես նաև 11 պայմանագրով գործարար ծրագրերի իրականացման պարտավորություններ.

◊ **Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից, վարձակալությունից շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարից ու պետական սեփականություն համարվող հողերի կադաստրային արժեքի վճարումից ստացված միջոցները կազմել են 538,106.3 հազար դրամ,** որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 397,688.5 հազար դրամ, համայնքային բյուջեներ են փոխանցվել 102,439.1 հազար դրամ, ՊՈԱԿ-ների բյուջեներ՝ 37,978.7 հազար դրամ:

ԲԻԶՆԵՍ ԱՐՄԵՆԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Մշակվել են հետևյալ ներդրումային առաջարկները և նախագծերը.

1. **Կոմպոզիտային հիմքով շինանյութերի և այլ դետալների արտադրություն.** նախատեսվում է Տավուշի մարզի Հաղթանակ գյուղում գտնվող արտադրական տարածքի բարեկարգման և անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման արդյունքում սկսել ապակեթելի հիմքով շինարարական ապրանքատեսակների արտադրություն:
2. **Գետնանուշի կարագի արտադրություն.** առաջարկվում է ստեղծել գետնանուշի կարագի արտադրամաս, որի արտադրատեսակները սկզբնական շրջանում նախատեսվում է իրացնել հայաստանյան և ռուսաստանյան շուկաներում:
3. **Օգտագործված յուղերի և անվադողերի վերամշակման գործարան.** նախատեսվում է ստեղծել առաջատար և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով համալրված գործարան, որը թույլ է կտա նաև բնության համար վնասակար թափոնների՝ պլաստմասե իրերի և օգտագործված անվադողերի վերամշակման միջոցով արտադրել դիզելային վառելիք:
4. **Ֆերմերային տնտեսության և հանգստի գոտու հիմնման նախագիծ.** առաջարկվում է փոքրամասշտաբ հանգստյան գոտու սահմաններում ստեղծել ֆերմերային և ջերմոցային տնտեսություն, ինչպես նաև եկամուտ ապահովող այլ փոքր համալիրներ:
5. **«WiMedia»՝ SS ոլորտի ընկերության զարգացման ներդրումային առաջարկ.** ընկերությունը, ունենալով «Wi-Fi» գովազդային հարթակ, առաջին փուլով նախատեսում է ընդլայնել վաճառքների ծավալը, այնուհետև՝ ապահովել հարթակի տեխնիկական զարգացումը՝ այդ ոլորտում միջազգային առաջատար ընկերություններից մեկը դառնալու նպատակով:
6. **«Sticker Market»՝ SS ոլորտի ընկերության զարգացման ներդրումային առաջարկ.** ընկերությունը նախատեսում է մոտ ապագայում վաճառքների ընդլայնում և հաճախորդների բազայի կտրուկ աճ միջազգային շուկայում:
7. **SS ոլորտի ընկերության գրասենյակի հիմնում Հայաստանում.** նախագիծը ներկայացնում է Հայաստանում SS ոլորտի գրասենյակ հիմնելու առավելություններն ու անհրաժեշտ ծախսերը՝ համեմատական անցկացնելով տարածաշրջանի այլ երկրների հետ:
8. **Խմորիչի արտադրամասի հիմնում.** նախատեսվում է հիմնել ժամանակակից արտադրամաս Աբովյան քաղաքում, որի արտադրանքը կբավարարի ոչ միայն տեղական պահանջարկը, այլև կարտահանվի Վրաստան և Ռուսաստան:
9. **Կարտոֆիլային չիպսերի արտադրության հիմնում.** նախատեսվում է ստեղծել արտադրամաս Երևանում կամ հարակից շրջաններից որևէ մեկում, որի արտադրանքը նախատեսվում է սպառել Վրաստանի և Ռուսաստանի շուկաներում:
10. **Հյուրանոցային համալիրի ստեղծում.** նախատեսվում է Ծաղկաձորի կենտրոնում գտնվող հյուրանոցի հիմքի վրա ստեղծել առաջատար հյուրանոցային համալիր:

11. **Տեքստիլ արտադրության վերագործարկում.** նախատեսվում է պոտենցիալ գործընկերների ներգրավման միջոցով գործարկել Շենգավիթում գտնվող տեքստիլի արտադրամասը:
12. **ՀՀ և ԱՀ զբոսաշրջային ինտերնետային պորտալի ստեղծում.** ծրագրով նախատեսվում է Հայաստանի և Արցախի վիդեոտեղեկատու էլեկտրոնային համակարգի ստեղծում:
13. **Պոլիէթիլենային հումքի հիման վրա արտադրության կազմակերպում և ջերմոցային տնտեսության հիմնում.** ծրագրի շրջանակներում նախատեսվում է Արարատի մարզում կազմակերպել պոլիէթիլենային հիմքի վրա արտադրություն, ինչպես նաև նշված արտադրատեսակների օգտագործմամբ կառուցել 10 հեկտար ջերմատուն և 14 հեկտար ջերմոցներ: